

Պաշտպանե՞ք ձեր իրավունքները

Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի մասին միջազգային ուսումնասիրությունները բազմիցս նշում են, որ «անմարդկային վերաբերմունքի դեպքերը ամենահաճախը տեղի են ունենում ոստիկանությունում ձերբակալված անձանց նկատմամբ»¹, ձերբակալության առաջին ժամերի ընթացքում, երբ ձերբակալվածներին չեն թույլատրում տեսակցել բժշկի կամ փաստաբանի հետ: Նման դաժան վերաբերմունքի հիմնական պատճառը ցուցմունքներ կորզելն է: Ավելին, Եվրոպայի Խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն բազմիցս ընդգծել է, որ «իր փորձի համաձայն, ազատագրկմանը անմիջապես հետևող ժամանակահատվածն այն պահն է, երբ անմարդկային և անմարդկային վերաբերմունքի ռիսկը ամենաբարձրն է»²:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ ենք համարում անդրադառնալ Հայաստանի օրենսդրության այն դրույթներին, որոնք պետք է իմանա յուրաքանչյուր ոք, որ կարող է գոհ դառնալ ոստիկանության կամ այլ իրավապահ մարմինների կողմից անմարդկային և դաժան վերաբերմունքի կամ խոշտանգման:

Ի՞նչ է ձերբակալումը:

Ձերբակալումը անձին որոշակի կարճ ժամկետով ազատագրկելն է, որն իրականացվում է անձին հանցագործության կատարման մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի կամ քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա:³

Ո՞ւմ նկատմամբ կարելի է կիրառել ձերբակալում:

Ձերբակալում կարող է կիրառվել միայն այն անձանց նկատմամբ, որոնք խախտել են արդեն իսկ իրենց նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, կամ մեղադրվում են այնպիսի հանցանքի մեջ, որի համար կարող է սահմանվել պատիժ ազատագրկման տեսքով:⁴

Ո՞րն է ձերբակալման և կալանավորման տարբերությունը:

Ձերբակալումը կարճ ժամկետով անձին արգելանքի տակ վերցնելն է, որը չի կարող տևել 72 ժամից ավելի: Ձերբակալումը կատարվում է հետաքննության մարմնի որոշման հիման վրա: Ի տարբերություն ձերբակալման՝ կալանավորումը անձին արգելանքի տակ վերցնելն է առավելագույնս 2 ամիս ժամանակով, որն իրականացվում է միայն դատարանի կողմից կայացված որոշման հիման վրա: Կալանքի մասին որոշումը կարող է երկարացվել դատարանի կողմից ևս 2 ամսով:

Որքա՞ն կարող է տևել ձերբակալությունը:

Ձերբակալությունը չի կարող տևել 72 ժամից ավելի: Եթե 72 ժամվա ընթացքում ձերբակալվածին չեն ներկայացրել նրան կալանքի տակ առնելու դատարանի որոշումը որոշակի մեղադրանքի հիման վրա, ապա անձը ենթակա է անհապաղ ազատ արձակման⁵:

¹ Այսլինգ Ռեյդի, Խոշտանգման արգելումը, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի կիրառման ուղեցույց, N6, էջ 47, ԵԽ, Գերմանիա

² 1999թ. Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի 9-րդ գեկույց. պարբ. 23

³ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 128

⁴ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 128, 2-րդ կետ

⁵ ՀՀ Սահմանադրություն, հոդված 16

Ինչպե՞ս է իրականացվում ձերբակալումը:

Անձին հետաքննության մարմին բերելուց հետո կազմվում է արձանագրություն ձերբակալման մասին, որտեղ նշվում են քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով մեղադրանք են ներկայացնում տվյալ անձին: Արձանագրության մեջ նշվում է նաև ձերբակալվածի իրավունքների և պարտականությունների մասին և պատճենը ստորագրությամբ հանձնվում է ձերբակալված կասկածյալին⁶: Ձերբակալվածին իր իրավունքների և պարտականությունների մասին պարզաբանում չներայացնելը օրենսդրության խախտում է: Ձերբակալման արձանագրությունը կազմելուց հետո հետաքննության մարմինը կամ քննիչը տասներկու ժամվա ընթացքում պետք է գրավոր տեղեկացնի դատախազին:

Որքա՞ն ժամանակ կարող է անձը գտնվել ոստիկանությունում առանց կարգավիճակը որոշելու:

Հետաքննության մարմին բերվելուց հետո երեք ժամվա ընթացքում անձին պետք է ներկայացվի ձերբակալման արձանագրությունը⁷: Եթե երեք ժամվա ընթացքում արձանագրությունը չի ներկայացվել, ապա անձը ենթակա է ազատ արձակման:

Ի՞նչ իրավունքներ ունի ձերբակալվածը:

Առաջին հերթին ձերբակալվածն ունի իրավական օգնություն ստանալու և պաշտպան ունենալու իրավունք: Իր ձերբակալման մասին արձանագրությունը ստանալուց կամ դրան ծանոթանալուց հետո, ձերբակալվածի պաշտպան հրավիրելու պահանջը ենթակա է անհապաղ կատարման: Ձերբակալվածն իրավունք ունի անարգել և կոնֆիդենցիալ /առանց այլ անձանց ներկայության/ տեսակցել իր պաշտպանի հետ, տեսակցությունների թիվը և տևողությունը չի կարող սահմանափակվել հետաքննության մարմնի կողմից: Արգելանքի տակ վերցնելու պահից 12 ժամվա ընթացքում ձերբակալվածն իրավունք ունի տեղեկացնելու ազգականներին իր գտնվելու վայրի մասին⁸: Ձերբակալված անձինք իրավունք ունեն մարմնական վնասվածքի դեպքում անհապաղ բժշկական զննություն ստանալու, ընդ որում ձերբակալված անձինք կարող են պահանջել իրենց նախընտրած բժշկի ներկայությունը զննության ընթացքում⁹:

Ո՞վ է պաշտպանը և ինչ իրավունքներ ունի:

Պաշտպանը կասկածյալի կամ մեղադրյալի շահերը պաշտպանող փաստաբանն է, ով ունի մի շարք իրավունքներ և պարտականություններ իր աշխատանքի լիարժեք իրականացման համար: Առաջին հերթին նա իրավունք ունի անարգել և առանց այլ անձանց ներկայության տեսակցելու իր պաշտպանյալի հետ առանց տեսակցությունների թվի սահմանափակման, ծանոթանալու իր պաշտպանյալին ներկայացված մեղադրանքի հետ, մասնակցել հարցաքննություններին և այլ դատավարական գործողություններին/քրեական մարմնի առաջարկությամբ/, առարկել և բողոք ներկայացնել քրեական հետապնդման մարմնի անօրինական գործողությունների դեմ:¹⁰

⁶ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 131՝

⁷ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 131՝

⁸ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 63

⁹ 06.02.2002 «ՀՀ Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի հոդված 21

¹⁰ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 73

Ու՞մ կարելի է դիմել պաշտպանից բացի իրավունքի խախտման դեպքում:

Համաձայն ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքի՝ յուրաքանչյուր անձ կարող է դիմել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին, ով անարգել կարող է մուտք գործել ոստիկանության բաժիններ և այլ ազատագրկման վայրեր¹¹:

Ինչպե՞ս պետք է ընթանա հարցաքննությունը:

Ձերբակալման որոշումը կասկածյալին ներկայացնելուց հետո կասկածյալը կարող է հարցաքննվել: Նրա պահանջը պաշտպանի ներկայությամբ հարցաքննվելու ենթակա է անհապաղ իրագործման և քրեական հետապնդման մարմինը պարտավոր է ամենաուշը 24 ժամվա ընթացքում ապահովել պաշտպանի ներկայությունը: Կասկածյալն ունի իրավունք մինչև հարցաքննվելը առանց այլ անձանց ներկայության տեսակցել իր պաշտպանի հետ: Պաշտպանի հետ տեսակցությունը չի կարող սահմանափակվել: Կասկածյալի մասնակցությամբ այլ դատավարական դործողությունների դեպքում քննիչը կարող է սահմանափակել տեսակցություն, սակայն այնուամենայնիվ տեսակցությունը չի կարող տևել երկու ժամից պակաս: Հարցաքննությունը սկսելուց առաջ քննիչը պարտավոր է մեկ անգամ ևս հիշեցնել և պարզաբանել կասկածյալի իրավունքները, մասնավորապես նշել այն, որ կասկածյալի ցուցմունքներ տալը վերջինիս իրավունքն է և ոչ պարտականությունը¹²:

Որքա՞ն կարող է տևել հարցաքննությունը:

Մեկ օրվա ընթացքում ձերբակալված անձի հարցաքննությունը չի կարող տևել ութ ժամից ավելի:¹³ Հարցաքննությունը առանց ընդհատվելու կարող է տևել ամենաշատը չորս ժամ, որից հետո հարցաքննող մարմինը պետք է ապահովի ձերբակալվածին հասանելի մեկ ժամ հանգիստը և սնունդը, այնուհետև հարցաքննությունը կարող է վերսկսվել : Հոգեկան կամ այլ ծանր հիվանդ ձերբակալվածների, ինչպես նաև անչափասհասների համար սահմանված է ավելի կարճ ժամկետ:

Ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքը

Կասկածյալը կարող է հրաժարվել ցուցմունքներ տալուց իր և իր հարազատների վերաբերյալ¹⁴: Ավելին, կասկածյալը պարտավոր չէ ապացուցելու իր անմեղությունը¹⁵: Այսպիսով, հետաքննության մարմնի ցանկացած հարկադրանք, որն ուղղված է կասկածյալից ցուցմունքներ կորզելու, անիրավաչափ է և կասկածյալը կամ իր պաշտպանը կարող է այդ մասին բողոք ներկայացնել պատկան մարմիններին: Պետք է անպայման ընդգծել, որ համաձայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի՝ յուրաքանչյուր անձ, որ կասկածվում կամ մեղադրվում է որևէ հանցագործության մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը ապացուցված չէ օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով¹⁶:

¹¹ 21.10.2003 «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի հոդված 8,12

¹² 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 211

¹³ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 205

¹⁴ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 20

¹⁵ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 18, կետ 2

¹⁶ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 18, կետ 1

Անհրավաչափորեն ձեռք բերված ապացույց

Ցանկացած ցուցմունք, որ ձեռք է բերվել հետաքննության մարմնի կողմից բռնությամբ, սպառնալիքով և այլ ֆիզիկական կամ հոգեկան ճնշումների ազդեցությամբ չի կարող համարվել թույլատրելի ապացույց¹⁷: Անթույլատրելի են նաև այն ապացույցները, այդ թվում նաև ցուցմունքները, որոնք ձեռք են բերվել կոպիտ օրեսնդրական խախտումներով՝ զրկելով կամ ապօրինի սահմանափակելով գործին մասնակցող անձանց իրավունքները, որը կարող է ազդել ապացույցների հավաստիության վրա¹⁸:

Ի՞նչ կարող է անել ձերբակալվածը իր իրավունքների խախտման դեպքում:

Ձերբակալված անձը իրավունք ունի ուղղակիորեն կամ պաշտպանի միջոցով բողոքներ ներկայացնելու ձերբակալվածների պահման վայրի դեկավարությանը, նրանց վերադասին, դատարանին, դատախազությանը, զանգվածային լրատվության միջոցներին և այլ պատկան մարմիններին,¹⁹ ինչպես նաև դիմելու Մարդու իրավունքների պաշտպանին: Հարկ է ընդգծել, որ այն անձինք, որոնք խոչընդոտում են կամ հետապնդում են այն ձերբակալված անձանց, որոնք իրենց իրավունքի խախտման վերաբերյալ բողոք են ներկայացրել պատկան մարմիններ, կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն²⁰:

¹⁷ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 105, կետ 2

¹⁸ 01.07.1998 ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 105, պարբ. 2

¹⁹ 01.07.1998 «ՀՀ Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի հոդված 13, կետ 3

²⁰ 06.02.2002 «ՀՀ Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի հոդված 18